

յետ ժամունն ասաց Վարդապետն զկտակն եւ զքարոզ խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զարմանազան բանիւք, որ գոռացոյց զժողովուրդն լալով, քանզի ասէր զչարչարանսն Քրիստոսի և զնըւազելն Ս. Աստուածածնին, յայր եւ լացուցանէր, որ արքն ըստ բառին գոռային, եւ կանայք ըստ իւրեանց բառին հեկեկային¹⁾ եւ մանկունք՝ որպէս թէ ոք դանեալ ի ներքուստ՝ սրտէ հեկեկեալ ճչէին. և յետ արձակմանն գնացաք ի խանութ:

Եւ լուաք յայսմ ժամու առաւօտիս (4 Ապրիլ) ըմբռնեալ զյէնկիչէր աղասին եւ արարեալ զնա խեղդամահ եւ բերեալ ձգեցին ի յԱթմէյտանին, եւ յետ պահու ինչ վերուցին, յէրէկի յետնուն ըմբռնեալ և օրս սպանեալ, համբաւելով թէ Ի տեղոջ փախստենին իւրովի խեղդեալ է:

Աւագ Շաբաթու (5 Ապրիլ) առաւօտուս գնացի ի Սուրբ Նիկողոս եւ ասաց զգաս կարգին, եւս վասն հաղորդութեան բաղում ասաց բան, եւ ասաց զիւր բանքն թէ Այսպէս բան արարեր են վերայ իմ, դատաստանին տայցեն զհամարն. եւ ոչք որ ինձ համար ձեր յիրիցանցն հետ խէթ ունիք՝ հաշտեցէք եւ ինձ համար մի՛ խռովիք աւուրքս, թէ ինչ են արարեր՝ ինձ են արարեր, Աստուած թողութիւն շնորհէ, զի երեկոյիս զՔրիստոս պատարագելոց եմք: Այսպիսի բանիւք զժողովուրդն մխիթարեաց: Երեկոյիս ձրագալուց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Յարութեանն. գնացաք անդ եւ դպրութիւն արարի եւ ինք պատարագեց, և Հայր մերին ի դուրս ելայ և գնացի ի մեր ժամն, զթապախն բռնեցի Էջմիածնայ:

Եւ օրս մեր կողմքն գրեցին թուղթ միւրստմիւրս ջէ, զչերթալն Մուղնեցուն եւ զկախարդութիւնն,

1) ճերիբային.